

## ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ

### ՀԱՅԿԱԿԱՆ ԶԱՐԴԱՐՈՒԵՍ

ՀԻՄՆԱԿԱՆ ՄՈՏԻՎՆԵՐԻ ԾԱԳՈՒՄՆ ՈՒ ԳԱՂԱՐԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ

№ 5651 ձեռագրի 52ա թերթում գլուխուղ մուտքազարդի աջ և ձախ կողմերում կանգնած են գաղանամարմին և մարդագլուխ երկու էակներ։ Երանց միջև, զաւակի կամ պաղաքարութեան գաղափարապատկերի փոխարէն, նկարուած է վեցանկեան կամ զայտ եռանկիւնիների մոսիվը, ինչպէս իւրաքանչիւր կհնդան արտայայտում է տոհմի էկս միաւորի կամ ֆրատրիայի գաղափարը, այնպէս էլ՝ այդ եռանկիւնիներից իւրաքանչիւրը Այդ միանիւսուած եռանկիւնիներից գէպի ներքեւ, մուտքի խաչածն փորսւածքն ի վար, կախուած է մի կանթեղ, որն իր մէջ սիմվոլացնում է օճախի գաղափարը։ Մուտքի վերեսում կանգնած է թռչնակերպ ծնող-գոյգը պաղաքեր կհնաց ծառի շուրջը։ Այս նկարում վերին ստահանի ուշտօքքաւ է գաղանամարմին էակների գէմքերի նըրը բութիւնն ու մարդկային գեղեցկութեան արտայայտութիւնը։ Երանք երիտասարդներ են և պասկուած են տմուսնական թողերով։ Տոհմի արտագրող ուժերի, երիտասարդութեան գաղափարների ընդհանուրացման գողարիկ մի տեսարան է դաւ։

Ինչպէս տեսանք, երկրաշախական համարուած մոտիվների միջոցավ էլ արտայայտուած են եղել հասարակական հասկացողութիւններ։ Այդպիսին էր նաև վերեսում քննուած մուտքի կհնարունում գանուող վեցանկիւնին կամ զայտ եռանկիւնիների միասնութիւնը։ Ուստի զարմանալի չէ, որ այդ կհնարունական մասում, ծնող-գոյգերի միջև յաճախ էլ պատկերում են պարզ կամ բարդ հիւսումներով ստեղծուած հատիկապատկերներ, «զարդ աշխարհ» կաշուած մատիվներ, խաչածն զարդեր, ծաղիկներ, ևայլն։

Վերցնենք № 4856 ձեռագրի 151ա թերթի մուտքապատկերը։ Նրա գմբէթաձեւ փորսւածքի աջ և ձախ կողմերում կանգնած են թռչնամարմին և մարդագլուխ երկու էակներ։ Այդ ծնող-գոյգի միջև, կննարունական մասում նկարուած է մի հիւսուածոյ հատիկապատկեր, որը ծիւղեր է արձակել և դալարանիւս զարդերով իրար միացրել թէ՛ մուտքի երկու էսուրը և թէ՛ այդ էսուրում զանուող էակներին։ Հետաքրքրական է նաև այդ ծնող-գոյգի գլխատարազը, որն, անչուշտ, կապ է ունեցել առօրեայ կենցազի հետ։

Առաւել մեծարժէք մուտքապատկերի հնք հանգիպում № 4878 ձեռագրի 3ա թերթում։ Պաղաքերութեան սիմվոլն այս ակնից իրենից ներկայացնուում է ծաղկա-հատիկային մի բարդ և հիւսուածոյ զարդ։ Նրանից գէպի աջ ու ձախ սփուռուած են բուսական պաղաքեր և դալարուն ծիւղերը, որնց զողարիկ փոնի վրայ պատկերուած է մարդագլուխ և թռչնամարմին ծնող-գոյգը։

Մանրակրկիտ զննութիւնն այսուել, ընդհաննարազէս տոհմա-ֆրատրիալ հասկացողութիւններից բացի, յայտաբերում է նաև մի այլ երեսոյթ։ Ծնող-գոյգերից մէկը (աջակողմնանը) ունի այնպիսի պաչ, որը ծիւղաւորուելով ծածկել է ամբողջ մուտքի էսուր։ Միւս էտին այդպիսի պաչ չունի։ Արա պաչից ոչ մի ծիւլ չի աճել։ Այս էակի շուրջը արբածուած դալարանիւս և պաղաքեր ծիւղերը կապուած են նրա կրծքի և կրծքաղարդի հետ։ Այս տարբերութիւնը պատահական չէ։ այդտեղ արտայայտուած է, մեր կարծիքավ, հայրիշխանութեան գաղափարը։ Բայ որում, ձախակողմնան էտին արտայայտուած

է մօր իմաստը, որը զաւակների հետ կապուած է լոկ որպէս սննդնող՝ իր կրծքի միջոցով։ Աջ կողմաւմ պատկերուած էտկը դրաւորում է հայրութեան զաղափարը, որին էլ հենց վերագրուած են բոլոր պըտղարերութեան սիմվոլները, նրա պոչի միջոցով։ Այս կարծիքն աւելի համոզեցացիչ է դասնում նաև նրանով, որ աշակողմեան էտկի ստքերի և պոչի միջն ընկած տարածութեան վրայ ցոյց է տրուած նրա արական ցուցիչը։ Զախարակողմեան էտկը, ընսկանաբար, զուրկ է այլպիսի նշանից։ Վերջիշենք հին քանդակներում պահպանուած մայրութեան և հայրութեան մասինները, որտեղ տուաջինները երեան են զալիս իրենց կանոցիսկան տեսքով, իսկ երկրորդները՝ տղամարդկային։ Պառզներն այսակեզ օրգանապէս կապուած են հօր հետ, ուստի և ժառանգութիւնը պատկանուած է հօրը։

Այս տեսարանում մեծ տրծէք սւնեն նաև ծնող-գոյզի գլխատարագը և կրծքաղարգերը, որոնք կապուած են միմիանց հետ և յիշեցնուած են չինական Պուտասատածու արագի համապատասխան մասերը։

Ինչպէս տեսնուած ենք, մուտքաղարգերում միշտ նոյն ժամանակների հետքերը չեն, որ պիտի որոնելու եթէ մենք այդ մասինները քննելու լինենք հեռաւուր ժամանակների փոնի վրայ, ապա այնտեղ կը տեսնենք մայրիշխանութեան պատկերը, իսկ եթէ աւելի ուշ շրջանի առումով գիտենք նրանց, ապա այնտեղ երեւան կազմոն հայրիշխանութեան շրջանի տարրեր էտապները։ Խօսքն, ի հարկէ, չի վերաբերուած այն տեսարաններին, որտեղ որոշակի է ժամանակի կնիքը (նման տեսարանները խիստ սակաւաղեալ են), այլ զարդարուեատում ծնչող մեծամասնութիւն կազմող այն մուտքապատկերներին, որտեղ ծնող-գոյզերի ներկայացուցիչները պատկերուած են միանման։ Այդպիսիների մէջ ընդհանրացուած է ընտանիքի զաղափարը իր պատմական առումով, ուր կարելի է տեսնել անդամ մենամուսնուկան ընտանիքի իմաստը՝ որոշ պայմանականութեամբ։ Ուստի զարմանալի չէ, որ, ինչպէս լուսանցազարգերում, այնպէս էլ այսակեզ, երեւան են գալիս նաև այնպիսի

ծնող-գոյզեր, ուր տակայ է մենամուսնուկան ընտանիքը։ Այդպիսիներից մէկն է, օրինակ, 1375 թուականին Գրաձորուած նկարուած մի ձեռագրի հետեւալ մուտքապատկերը։ Այսուեղ մուտքի վերեւում ցոյց է տրուած նորապատկների մի զոյց։ Այս հարսն ու փեսան այլևս կապ չունեն հանգայն ժամանակների հետ։ Դա իր ժամանակի ընտանեկան յարաբերութիւնների արտայայտութիւնն է, ուստի մուտքապատկերն էլ այդ ժամանակուայ տան իշտասն ունի։ Սակայն չի կարելի նմուն տեսարանները համարել հարսանեկան կոնկրետ գէպքերի և կանկրետ ամուսնութիւնների նուիրուած զարգեր։ Ինչպէս բոլոր գէպքերում, այնպէս էլ այսակեզ գործ ունենք երեսյթների և հասկացութիւնների ընդհանրացման հետ։ Իր ամբողջութեան մէջ իւրաքանչիւր մուտքարտայատում է ընտանիքի զաղափարը։

Այսպիսով, տեսնուած ենք, որ, ընվանդակութեան տեսակէտից, մուտքերն ու տոհմածուռ-լուսանցազարգերը էտկան տարրերութիւններ չունեն։ Մի գէպքում տոհմային կենաց ծառը յարմարեցուած է ճարտարապետուկան շէնքի ճակատին, իսկ միւս գէպքում՝ այդ շէնքի մօտ կանգնեցուած աւանդական կամ տոտեմական սիւնին։

Թէ որքան մեծ է եղել մանրանկարչական և ճարտարապետուկան մուտքերի տոնչութիւնը՝ գա կարելի է ցոյց տալ պահպանուած համապատասխան վկայութիւնները համեմատելով։

Այս հարցի մանրանկարի քննութիւնը ներկայ աշխատութեան սահմաններում անհնար է կատարել, ուստի, որպէս օրինակ յիշենք միայն մի քանի նմոյց։

Վերցնենք լե 5147 ձեռագրի 11ա թիրթի մուտքապատկերը։ Այս մուտքի փորուածքի ամբողջ ձեւը յիշեցնուած է զմբէթուակ կառոյց, միաժամանակ արտայայտելով նաև կենաց ծառի ու պաղաքերութեան զաղափարը։ Վերջին մոմենտը շիշտուած է յատկապէս փորուածքի վերին ծայրին պատկերուած վարսանդապաղային սիմվոլի միջոցով։ Նման փորուածքների և ճարտարապետուկան խորչերի (նիշա) տոնչութիւնը ցոյց է տրուած վերեւում։ Բաւական է մասզին անջատել այս

ահասրանից փորուածքի ձեր՝ վարսանդապազգային սիմվոլով, որպէսզի ստացուի մի այնպիսի գմբէթի կամ մասուուի վերին մասի պատկեր, որպիսիներից շատերն արգեն տեսնել ենք և շատերն էլ կը տեսնենք ստորեւ:

Մաւաքերի և ձարսարապետկան կառաջների տանչութիւններն առելի ցայտուն են հետեւեալ օրինակներում:

Հ 5556 ձեռագրի 12ո թերթում գրանուղ մաւաքապակերի աջ և ձախ կողմերում պատկերուած են մէկական սիրեն իւրայատուկ գիրքով: Երանք կարծես այն էակներն են, որ հսկում են տուեալ մուտքի վրայ: Ձարսարապետթիւն մէջ այս մուտքին համապատասխանում են այն մուտքերը, որոնց աջ և ձախ կողմերին կանգնած են նման էակների արձանները: Այդպիսիներից է, օրինակ, կիլիկիտայի խաւրտ կամ Խոսւերապալիս քաղաքի մի հին տաճարի մուտքը՝ իր արձաններով:

Հետաքրքրուկան է նաև այս տաճարամուտքի աջ կողմում երեսցող երկգրւխոնի թռչունի քանդակը, որը, ինչպէս տեսանք, կրօնական առարկայ գառնալուց առաջ, արտայայտել է ծնող-զոյլի իմաստը՝ պատմա-համարակական առումով:

Ռումինական մանրանկարչութիւնից իշենք մի օրինակ, որը նոյնպէս կոպունի այդպիսի մոտիվների հետ:

Ինչպէս տեսնում ենք, այսուղ արդէն գործ ունենք ուշ ժամանակների հասկացութեան հետ: Հին մոտիվներն այսուել փոխորինուած են մարդկային ծնող-զոյլով:

Համանման ծագում ունի նաև պուլկարական մանրանկարչութիւնից մէջքերուղ հետեւեալ մուտքապակերը:

Այս բոլորից յետոց կարելի է տեսնել, որ, իրօք, մանրանկարչութեան մէջ այնքան մնեց առարծում գտած մուտքապակերները ձարսարապետկան ծագում ունեն: Երանց վրայ կատարուած զարդերը ցոյց են տալիս, որ այդտեղ էլ տոկոյ են ինչպէս տոհմատիրական կարգերի, այնպէս էլ ֆրատրիալ կազմաւորումների զաղափարական մնացուկները: Երենց հերթին, այդ զարդերը օգնում են զաղափար կազմելու նաև այն չէնքերի էռթեան մասին, որոնց ճակաաներին էլ երեան են

եկել գրանք, ունենալով գաղափարական յասուկ նշանակութիւն: Երանք իրենց մէջ ամփափել են ընտանիքի, գերգաստանի, տոհմի, ցեղի, ինչպէս նուև ժողովրդի միասնութեան գաղափարը: Եւ բոլորովին էլ պատահական չէ, որ ձեռագրային կուլտուրան, որպէս ամենամասսայական և ամենասիրելի գլխազարդ, օգտագործել է այդ մատիվները՝ իւրայսաւուկ մշակումներով և կոմպազիցիաներով:

Իւրաքանչիւր ձեռագիր, եթէ այն նկարագարդում է թէկուզ շատ հասարակ կերպով, եթէ ոչ բոլոր տուններն նիւթերի սկզբներում, զոնէ տուածինի սկզբում ունենում է մաւագազարդ: Միջին զարդարուածութեան գէոգրամ, նոր նիւթի սկզբից վերե, պատկերում է մի գողորիկ մուտք, նրանից գէպի աջ, ամբողջ էջի լուսանցքով մէկ, նկարում է մի տոհմատառ-լուսանցազարդ: Մուտքի տակ գրւում է նիւթի խորազիրը և ապա բաւն նիւթը: Ասպարաբար նիւթի սկզբի տուները, տաղերը, յաճախ էլ ողջ էջը զբրւում է զարդարականերով:

Այս ճախ ու հարուստ մուտքերի փախարէն յաճախ էլ հանդիպում ենք քառակուսի, քառանկիւն կամ ուզդակի ժապուենածե զարդերի, որոնք էլ երբեմն ընդունում են ուղիղ, բայց զարդարուած գծի տեսքութիւների մօտ:

Բնականաբար հարց է տուածուում: Եթէ մաւաքերն իրենց զարդերով այդքան սերուէն կապուած են տոհմի, ընտանիքի, պետութեան և համապատասխան կրօնական պատկերացութերի հետ, ապա նրանք պիտի վերեւում քննուած ձեւերով, բայց ազգային իւրայատուկ ոճով, երեսն գային նաև ուրիշ ժողովուրդների մօտ: Եւ զո՞ւ ամենից տուած, որպէսիւն այն հասկացութիւնները, որոնք ընկած են մուտք կաչուած զարդերի հիմքում, բնորոշ են բոլոր ժողովուրդներին և նրանց նախորդներին՝ սկսած ընտանիքի ամենանախական ձեւերից և վերջացրած մենամուսնական ընտանիքով: Եւ, իրօք, փատերն այսուղ էլ այնքան հարուստ ու բազմակազմանի են, որ տուններին բացառութիւնների կարգեր չի գգացւում:

Ա. Ճ. Մնջականեան  
(Եարունակելի՝ 2)